ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» հունվարի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Գնահատող հանձնաժողովի 12.01.2024թ. նիստի N 3 արձանագրության 1-ին կետում նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին ուղղված 12.01.2024թ. N ԴԴ-3-Ե-121 գրությանը (կցվում է) ի պատասխան «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից 2024 թվականի հունվարի 12-ին և 13-ին ստացվել են գրություններ (կցվում են):

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

2.1. ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), հայտում բացակայում է իրական շահառուների

վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.3), ինչպես նաև 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ներկայացված հայտում առկա վերոնշյալ դիմում-հայտարարությունը հաստատված չէ մասնակցի ղեկավարի (Հայկ Գասպարյանի) էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

2.2. Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 6-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1. ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) (այսուհետ՝ դիմում-հայտարարություն) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-ՏՆՏ1» ծածկագիրը,
- դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «ՀՀ ազգային անվտանգության ծառայություն», ինչպես նաև Համակարգում նշված տեղեկատվության համաձայն ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ն մասնակցել է ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններին, այն դեպքում, երբ դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ նշված են հետևյալ չափաբաժինները՝ «1,2,3,4,5,6,7,8,9,10,11,14,15,16,17,18,19,20,71,72,73,74,76,77,80,81,82,128,129,131,132,133,134»,
- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում լրացված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (լրացված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը,
- դիմում-հայտարարությունը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է 24.12.2023թ.-ին, այն դեպքում, երբ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել են 27.12.2023թ.-ին:

3.2. Արգավանդ Կահույք ՍՊԸ

- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից 2024 թվականի հունվարի 12-ին և 13-ին ստացված գրությունների համաձայն՝ Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1 և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝

Հավելված N 1.3 ներառող PDF ձևաչափով փաստաթուղթը չի պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություններ:

Միաժամանակ՝ վերոնշյալ դիմում հայտարարության 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ:

- 6-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. հունվարի 17-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի և Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունվարի 16-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Արմինե Մարգարյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 121

« 12 » հունվարի 2024թ.

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՈՆԻԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

(հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ)

Հարգելի՛ պարոն Ավետիսյան,

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս կապակցությամբ՝ կից ներկայացնում եմ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.3) և խնդրում հնարավորինս սեղմ ժամկետում տալ կարծիք՝ նշված փաստաթղթերում մասնակցի կողմից դրված էլեկտրոնային թվային ստորագրությունների հիշյալ նորմով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և
գնումների համակարգման վարչություն,
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788

Հավելված N 1
« ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

Արգավանդ Կահույք ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Դատական դեպարտամենտի կողմից « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* ծածկագրով հայտարարված

էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 6 չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Արգավանդ Կահույք ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

ՀՀ ռեզիդենտ:
երկրի անվանումը

Արգավանդ Կահույք ՍՊԸ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01261634
  հարկի վճարողի հաշվառման համարը
- բանկային հաշվեհամարն է՝ 163218020242
  բանկային հաշվեհամարը
- գործունեության հասցեն է՝ գյուղ Արգավանդ, Մայրաքաղաքային 202
  գործունեության հասցեն
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ armeps@inbox.ru
  էլ. փոստի հասցեն
- հեռախոսահամարն է՝ +374 43434342
  հեռախոսի համարը
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ АРГАВАНД МЕБЕЛЬ ООО
  ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

Սույնով Արգավանդ Կահույք ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) Արգավանդ Կահույք ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանում

բավարարում են « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Արգավանդ Կահույք ՍՊԸ -ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում [1]

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ Արգավանդ Կահույք ՍՊԸ-ին
  մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի

---

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը:

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս Արգավանդ Կահույք ՍՊԸ -ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Գարիկ Նարիբեկյան Սամվելի	նույնականացման քարտ 000391417	

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

Արգավանդ Կահույք ՍՊԸ կողմից առաջարկվող

մասնակցի անվանումը

ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

Digitally signed by NARIBEKYAN GARIK 3904850279
Date: 2024.01.05 10:24:54 AMT

Արգավանդ Կահույք ՍՊԸ –ի տնօրեն՝ Գարիկ Նարիբեկյան _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը

լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:

Հավելված N 1.3**
« ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* **ծածկագրով**
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՁԵՎ
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

Ստորև ներկայացվում է Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ
մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1340795/bor

Digitally signed by NARIBEKYAN GARIK 3904850279
Date: 2024.01.05 10:22:40 AMT

Արգավանդ Կահույք ՍՊԸ –ի տնօրեն՝ Գարիկ Նարիբեկյան _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը

Կ. Տ.

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

12.01.2024 թ.

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի
Դատական դեպարտամենտի
ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ
Արշակ Վարդապետյանին

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի հունվարի 12-ի թիվ ԴԴ-3-Ե-121 հարցման՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի փաստաթուղթը՝ Հավելված N 1 « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* ծածկագրով դիմում հայտարարությունը, չի պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություն:

Տեղեկացնում ենք նաև, որ _PDF ձևաչափով փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրության ստուգումը կարող եք կատարել կայքում տեղադրված հետևյալ գործիքի միջոցով՝ https://ekeng.am/hy/sec_sub/sign_check

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

Recoverable Signature

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049

Մ 550
12.01.24թ

Ծրագրերի կառավարման բաժին
+374 60 464 501 (204)

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

13.01.2024 թ.

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի
Դատական դեպարտամենտի
ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ
Արշակ Վարդապետյանին

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի հունվարի 12-ի թիվ ԴԴ-3-Ե-121 հարցման՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի PDF ձևաչափով փաստաթուղթը՝ ներառող Հավելված N 1 « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52»* ծածկագրով դիմում հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը Հավելված N 1.3, չի պարունակում պատշաճ էլեկտրոնային ստորագրություններ:

Տեղեկացնում ենք նաև, որ _PDF ձևաչափով փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրության ստուգումը կարող եք կատարել կայքում տեղադրված հետևյալ գործիքի միջոցով՝ https://ekeng.am/hy/sec_sub/sign_check

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

Recoverable Signature

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ՄՈՒՏՔԻ ԹՎԱԿԱՆ

Մ 552
150 / 24թ

Ծրագրերի կառավարման բաժին
+374 60 464 501 (204)